


Ա. Ֆ. ԿԻՏԱՅԵՎ  
Ա. Պ. ՊՈՊՈՎ

# ՍԻԼԱԽՈՆՏԵՐԻ

ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ  
ԳԱՐՆԱՆԱՑԻՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱԿՈԴԵԼԻ  
ԻՆՍՏԻՏՈՒԹ  
ՊՈՏՈՆՈՄԱՆԻ  
Ակադեմիա Նauk  
СССР



04 AUG 2010

Հ 34-Կ  
ՀԱ 929

Ա. Գ. ՊՈՊՈՎ, Ա. Յ. ԿԻՑԱՑԵՎ

“632”  
Դ-84

# ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ

ԳԱՐՆԱԿԱՅԻՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱԿՈՒԵՐԻ  
Института  
Биотехнологии  
Академии Наук  
СССР

Թարգմ. Վ. ԱՎԱԳՅԱՆ



ԱԶԱԳ-ԱՅՆՎԵՐՆ ՅԵՐԿՐՈՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀՊՍՊԳ - Գ Բ Ն-1934

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծավալուն ճակատով պայքարենք մոլախոտերի դեմ . . . . .	3
Դարնանային աշխատանքներն սկսելուց առաջ մաքրել դաշտերը	
մոլախոտերից . . . . .	7
Այրողովին անցնել ճիշտ ցանքսաշրջանառությանը . . . . .	8
Յանել միայն զտված սերմացույով . . . . .	9
Հողի գարնանային լավ մշակումը — հաղթանակի լավագույն զրա-	
վականն և մոլախոտերի դեմ մղվող պայքարում . . . . .	10
Յեթե վատ ցանես — ապա թույլ կտաս մոլախոտին ավելի ու-	
ժեղ զարգանալու . . . . .	14
Արգելել մոլախոտերի մուտքը սոցիալիստական դաշտերում . . . . .	15
Ժամանակին վարել և լավ մշակել մաքուր ցելերը . . . . .	17
Հաջողությունը կախում ունի աշխատանքների վորակից . . . . .	19
Կազմակերպված պետք և տանել պայքարը . . . . .	19



*61278-67*

Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ

Технический редактор О. Тер-Давыдов

Сдано в набор 14/II 1934 г.  
Издание с-х 123/3701  
Статформат А5 - 148x210,  
Уполномочил Б-270

Подписано в печать 20/II 1934 г.  
Объем 1/4 печ. лист  
Заказ № 936  
Тираж 1500

Тип. им. «Стачки 1902 г.» АЧКПО Ростов н-Дону

## ՇԱՎԱԼՈՒՆ ՃԱԿԱՏՈՎ ՊԱՅՔԱՐԵՆՔ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

«Մոլախոտերին վերջ պետք ե տալ — նրանց գոյությունը մեր անարգանքն ե, մեր պատուհասը»: Անա թե ինչ ե ասել մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինի լավագույն զինակից ընկ. Կազմակերպիչը: Այս նշանաբանն առաջին հերթին վերաբերում է մեր յերկրամասի կոլտնտեսություններին, վորովհետև մեր դաշտերում մոլախոտերն առանձնապես շատ են:

Մոլախոտերի զարգացմանը նպաստեցին կուլակության և սպիտակ գվարդիականների կողմից կազմակերպված ազգունումիական միջոցառումների սարստածը, ազրոտեխնիկայի արհամարհումը, վնասարարական նոր և վատ վարը և ցանքսաշրջանառության բացակայությունը: Առանձնապես վնասակար ներդորձություն ունեցան կուլակային այն դատողությունները, վոր մեր յերկրամասի դաշտերն այնքան հարուստ են, այնքան բարեբեր, վոր առանց ճիշտ հողամշակման և առանց ցանքսերը խսամելու յել նրանք լավ բերք կտան:

Շատ կոլտնտեսություններ, յենթարկվելով կուլակային այս ազիտացիային, վատ և անխնամ կերպով եյին մշակում իրենց արտերը, վորի հետևանքով ել առաջ յեկավ արտերի խիստ աղտոտվածություն:

1933 թվականին քաղբաժնների ղեկավարությամբ, կուլտնտեսությունները ջախջախելով կուլակային սարստածը, հասկացան, վոր անհրաժեշտ և «աշխատել ազնվաբար, պահպանել կոլտնտեսային բարիքը», ավելի բարեխղճորեն կատարեցին աղբոտեխնիկայի հիմնական պահանջները և բերքի համար մղվող պայքարում ձեռք բերին առաջին հաջողությունները:

1932 և 1933 թվականների դասերը ցույց տվին, վոր մոլախոտերի գեմ մղվող պայքարը — դա բերքատվության բարձրացման անհրաժեշտ պայմանն է:

## Խ20<sup>Վ</sup> ԵՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՄՈԼԱԽՈՏԵՐԸ

1. Մոլախոտերը խեղում են ցանեսերը: Բոլոր բույսերը լույսի և ջերմության կարիք ունեն: Իսկ մոլախոտերը նեղում են ցանքսերին, զրկում են նրանց լույսից: Աղտոտված հողն ավելի վատ և տաքանում:

2. Մոլախոտերը ծծում են հողը և մշակովի բույսերից խլում են խոնավությունը: Մոլախոտերի մի փութ չոր նյութի գոյացման համար ծախսվում է 400—500 փութ ջուր — հողի խոնավություն: Հաճախ կարելի յէ նկատեր վոր աղտոտված ցանքսերում հատիկի լցվելու ժամանակ մոլախոտերն ահազին չափով ծծել են հողը և նույնականացնելու վատ և անդրադառնում հատիկի լցվելու վրա: Հստ վորում նվազ հատիկ և ստացվում և հացարույսերի «զարկվածք» և նկատվում:

3. Մոլախոտերը խլում են սննդարար նյութերը մշակովի բույսերից: Շատ մոլախոտեր հողից ավելի շատ սննդարար նյութեր են վերցնում, քան մեր ցանքսերը: Գարու յուրաքանչյուր ցենտներ բերքի վրա մոլախոտը հողից վերցնում է 6 կգ սննդարար նյութեր, իսկ որինակի համար, ասլիկո խոտը (սուրեկա) 10 կգ:

4. Մոլախոտերի վրա բույնի են դնում բույսերի վնասատուները յեվ նիվանդությունները: Շատ վասառուներ, որինակի համար, մարդաթիթեռը, հասկակեր բզեզը մոլախոտերի վրա յեն ապրում, ահազին քանակությամբ բազմանում են և անցնում ցանքսերի վրա: Մի շարք հիվանդություններ (ժանգ և ալյն) մոլախոտերից և վայրի բույսերից անցնում են մշակովի բույսերին:

5. Մոլախոտերը դմվարացնում յեվ բանգացնում են արևերի մօւկման յեվ բերքահավաքի աշխատանքը: Յուրաքանչյուր կոլտնտեսական իր կազմի վրա փորձել ե, թե ինչքան դժվար է վարել կոշտ մոլախոտերով (տատասկափուշ դոննիկ) աղտոտված հողերը, թե ինչքան դժվար է հնձել փաթաթուկով (ՑԻՒՀՕԿ) խճճված հացարույսը, ինչքան գերանզի յե ճաքում է կոտրվում աղտոտված արտերում: Անցյալ տարի շատ կոլտնտեսություններում կոմբայնները բոլորովին չելին կարողանում աշխատել՝ ցանքսերի սաստիկ աղտոտվածության պատ-

ճառով: Աղտոտված հողամասերում աշխատելու դեպքում ահազին զուր աշխատանք և ժամանակ և վատանվում և աշխատանքների վորակը վատ և լինում:

6. Մոլախոտերն իջեցնում են հատիկի վորակը յեվ արժեքը: Աղտոտված հացահատիկն եժան և գնահատվում: Հաճախ հացահատիկն աղտոտվում և թունավոր կամ զառն մոլախոտերով և այն ժամանակ նա կարող է անպետք դառնալ սննդի և կերի համար: Մոլախոտերը թույլ չեն տալիս, վորպեսզի կատարելու բառներն ունեվոր դառնան:

1933 թվականին մեր կոլտնտեսությունները մոլախոտերի պատճառով ահազին քանակությամբ հացահատիկ կորցրին: Ավելի, քան թե պետությանը հանձնեցին հացահանձնման կարգով:

Շատ կոլտնտեսություններում մոլախոտերը կոլտնտեսականից գողացնն, ավելի ճիշտ հափշտակեցին նրա հացի մեծ մասը:

Յեվ իսկապես, յեթե կոլտնտեսությունը մի հեկտարից բատացել ե 16 ցենտներ աշխանացորեն (իսկ այդ ամենակին շատ չե), ապա պետության և ՄՏկայանի հետ հաշիվը փակերուց և սերմֆոնդ ամբարելուց հետո, աշխորերի միջև բաշխելու համար մի հեկտարից մնում է, մոտավորապես, 10 ցենտներ: Իսկ յեթե կոլտնտեսությունը 1 հեկտարից ստացել է կրկնակի պակաս — 7 ցենտներ, ապա աշխորերի միջև բաշխելու համար մնում է միայն 2 ցենտներ — 5 անգամ պակաս: Ցածր բերքը բացատրվում է, զլիսափորապես, զաշտերի աղտոտվածությամբ, վորն առաջ է գալիս նողը վատ մշակելու, ցանքսի և բերքահավաքի ժամկետները չպահպանելու, ցանքսաշըճանառության բացակայության պատճառով:

Մոլախոտը կուլակի դաշնակիցն է: Հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարը այսպես և ասում կոլտնտեսություններին ուղղած իր գիմումի մեջ. «Մոլախոտը լինում և այն զաշտում, վորտեղ կոլտնտեսությունում կուլակային աղբը շատ է»:

Մոլախոտերի գեմ պայքարելը բավականաչափ գժվար խնդիր է և, ինչպես կուլակի գեմ մղվող պայքարը, պահանջում է բոլշեկյան ուժեղ զգնություն: Մոլախոտերը ցանքսերին լավ են հարմարվում, ոգտագործում են զաշտերը մշակելու և ցանքսերը խնամելու գործում յեղած մեր բարելավումները:

Մի քանի մոլախոտեր սկզբում համարյա անհատելի յեն, իսկ յեթե նրանց գեմ պայքար չտարվի, ապա նրանը շատ վր-

տանգավոր կարող են դառնալ: Այժմ այսպիսի դրություն ե դոննիկների (ծօհհակ) նկատմամբ: Մինչև վերջին տարին նա շատ քիչ չափով եր նկատելի: Անցյալ տարի նա հազարին վնաս հասցըրեց և այս տարի վտանգ ե սպառնում 100 հազարավոր հեկտար ցանքսերին: Այսպիսի դրություն կարող ե ստեղծվել ապիկո խոտի նկատմամբ:

Մոլախոտերը համառ յեզ դիմացկուն թշնամիներ են: Նրանք լավ հարմարում են ցանքսերին և խիստ բազմանում են: Մեր հացարույսերը — ցորեն, գարի մի բույսից տալիս են 100—200 սերմ, իսկ մոլախոտերը շատ ավելի, որինակի համար

Փեստուկ (օւսիօց)	390	սերմ
Գյուլուկ (կյոկոլ)	2500	»
Ապիկո (սուրեպկա)	23000	»
Փաթաթուկ (բայոհոկ)	112000	»
Շչիրիցա (պարսկա)	500000	»
Հասարակ ջրկոտիմ (ցոլացնիկ)	730000	»

Մոլախոտերի սերմերը հեշտությամբ տարածվում են քամու, կենդանիների և հենց մարդու միջոցով: Կա մեզ բոլորիս ծանոթ տառասկափուշ (օօօռ), վոր յեթե կորելու լինես հողի մակերեսին յեղած նրա մասը — պատկը, նա նորից ե աճում: Յեզ միայն մի քանի անգամ կտրելուց կամ պոկելուց հետո յե, վոր այս մոլախոտը հյուծվում և վոչչանում ե: Հետևաբար և մոլախոտերի դեմ մզկող պալքարում նույնպես բոլշեկույան համառություն ու տուկունություն ե հարկավոր:

Ներկայումս մենք ունենք մոլախոտերը հաղթահարելու բոլոր ավաները: Այս տվյալներն են. 1) կողեկտիվ տնտեսություններ, վորոնք վոչչացնում են հողերի միջև յեղած սահմանները և ցրվածությունը, 2) կոլտնտեսությունների և ՄՏ կայանների հակայական չափով տեխնիկապես զինված լինելը տրակտորներով, կոմբայններով, կուրտիվատորներով, սերմագափչ մեքենաներով և այլն, 3) կոլտնտեսականի աղնիվ, բարեխիղճ աշխատանքը, կոլտնտեսությունների բոլշեկույան կուտեկավարումը հանձին ՄՏկայանների բաղրամինների:

Կոլտնտեսություններից պահանջվում ե միայն բարեխիղճորեն աշխատել և կատարել կուսակցության և կառավարության կողմից սահմանված աղքոկանոնները:

«Վերպեսպի մոլախոտերը վոչչացվեն, դրա համար պահանջվում ե վոչ այլ ինչ, յեթե վոչ աղնիվ աշխատանք, հոգացողու-

թյուն իր տնտեսության մասին»: (Հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարի դիմումից):

Պայքարի միջոցները մեզ հայտնի յեն, դրանք են — սերմացուների գառումը, քաղհանը և ցանքսերի խնամքը, միջնողային սահմանների և ճանապարհների հնձումը, մաքուր և լավ մշակված ցելերը, խողանների ծանծաղավարը, աշնանավարի խորունկ վարը, ցանքսաշրջանառությունը, բոլոր աշխատանքները ժամանակին կատարելը և բարձր վորակը:

Հարկավոր ե միայն լայն չափով, ժամանակին և միստեմատիկորեն տանել պայքարը: Մոլախոտերի դեմ պայքարելու վերաբերյալ առանձնապես պատասխանատու աշխատանքները գարնանը պետք ե կատարվեն: Կոլտնտեսությունները մորիլիղացիայի պետք ե յենթարկեն իրենց բոլոր ուժերը նրա համար, վորպեսզի դաշտերում գարնանային աշխատանքներն անցկացվեն վորակի համար և մոլախոտերի դեմ առանձնապես համառ պալքար մղելու նշանաբանի ներքո: Պետք ե հիշել, վոր բերքի բախտը վճռվելու յե նրանով, թե ինչ չափով մենք կկարողանանք ապահովել մեր դաշտերը լավ հողամշակումով և բույսերի պատշաճ խնամքով, թե ինչ աստիճան մենք գարնանից իսկական միահամուռ ճակատով կալախոտերի դեմ:

## ԳԱՐՆԱՅԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԳՆԵՐՆ ՍԿՍԵԼՈՒՅ ԱՐԱՋ ԴԱՇՏԵՐԸՐ ՄԱԳՐԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻՅ

Աղով-Սևծովյան յերկրամասի կոլտնտեսությունների համար Յերկրգործկումը հաստատել ե դաշտերի աշխան-ձմերային մաքրման պլանը մոլախոտերից — 2.185 հազար հեկտար: Սակայն, կոլտնտեսությունների մեծամասնությունն աշխանից ժամանակը ձեռքից բաց թողեց և պլանը չկատարեց: Մինչև գարնանացնի կամպանիայի սկզբին այս պլանը պետք ե կատարվի՝ ինչ գնով ել վոր լինի: Զի կարելի կորցնել դաշտերը մոլախոտերից մաքրելու համար բարեհաջող ժամանակը գարնանացնի աշխատանքներն սկսելուց առաջ և հետո աշխատանքից պոկել մարդկանց, քաշող ուժը, յերբ արդեն կարելի յե վարել և ցաներ և առավել ևս չի կարելի վարել չմաքրված հողերը, վորովհետև այդ հանգամանքը կտա վարի և սերմաթաղի անպետք վորակի, կավելացնի աղտոտվածությունը և կիջեցնի բերքը:

Դաշտերը մաքրելու գործում վոչ մի որ չի կարելի բաց թողնել: Զյան հալչելուց անմիջապես հետո, մանավանդ ոգտվելով չոր և ցուրտ որերից ու ժամերից, իսկույն պետք ե ձեռնա-

մուլս լինել հնձելու, տափաններով պոկելու, տափտափելու և այլելու միջոցով դաշտերը մոլախոտերից և շարատունկ մշակույթ-ների մասցրդներից մաքրելու գործին:

Այս աշխատանքի համար վճռականորեն մորիլիզացիայի պետք է յենթարկել կոլտնտեսության վողջ աշխատուսակ բնակչությունը և դուրս բերել դաշտ: Մոլախոտերի նախացանքսային վոչչացումը չպետք է ձգձգել և միենույն ժամանակ հարկավոր և լավ վորակական ցուցանիշներով կատարել աշխատանքը: Պետք է սպառազործել առաջնակարգ կոլտնտեսությունների անցյալ տարվա փորձը, աշխատանքը կատարել լավ և սեղմ ժամկետերում: Վարի և տափանման լավ վորակը, սերմերի ճիշտ թագումը և բարձրորակ ցանքսը կարելի յե ապահովել միայն այն դաշտերում, վորոնք ցանվելուց առաջ լավ մաքրված են մոլախոտերից:

## ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԱՆՑՆԵԼ ՃԻՇՏ ՑԱՆՔՍԵՐՉԱՆԱՌՈՒԹՅԱՆԸ

Յանքաշըրջանառությունը — բերքատվության բարձրացման և մոլախոտերի դեմ պայքարելու կարևորագույն միջոցն եւ Համարյա ամբողջովին ավարտվել և ցանքսաշըրջանառությունները կոլտնտեսություններում բաժանելու դորձը: Կոլտնտեսությունները աշխանացանը հիմնականում կատարել են ցանքսաշըրջանառության դաշտերում: Այժմ խնդիրն այն եւ, փորպեսզի գարնանցան մշակույթներն ել ցանքին սահմանված ցանքսաշըրջանառություններին խիստ համապատասխան կերպով: 1934 թվին ավարտել ճիշտ ցանքսաշըրջանառության անցնելու դորձը:

Մշակույթները ճիշտ պետք է զետենել դաշտերում, վարպեսզի ամեն արժեքավոր հացահատիկային և տեխնիկական մշակույթներին արմենական լավագույն նախորդողներ և մաքուր հոգեր, վորպեսզի ամենաաղտօտ հողամասերը թողնվին ցելի համար: Յանքսաշըրջանառությանն անցնելիս, պետք է խուսափել արեածաղիկը ցանքելուց այն նողամասերում, փորանդ նա ցանքելիս և յեղել անցյալ տարի կամ 2—3—4 տարի առաջ: Պետք է խուսափել 2 տարուց ավելի իրար հետեւ դարնանցան մշակույթները գարնանցան մշակույթների, մանավանդ գարնանցարենը դարնանային հացարույսերի վրա ցանքելուց և այլն: Այս խնդիրն այնքան ել հասարակ չե: Անհրաժեշտ և ուշադրության տանել հոգի ընույթը, վորոշել նախորդողները և դաշտերի աղտօտավածությունը, այլ խոսքերով ասած,

ոլարզել գաշտերի անցյած տարիների պատմությունը և դրան համապատասխան ել աեղավորել ցանքսերը:

## ՑԱՆԵԼ ՄԻԱՅՆ ԶՏՎԱՌ ՍԵՐՄԱՑՈՒՅՈՎ

Կալսիչի տակեց ստացված և նույնիսկ կալատեղում քամհարված մշակովի բույսերի հատիկները միշտ ել պարունակում են վորոշ խոկ հաճախ շատ մեծ քանակության մոլախոտերի սերմեր: Մաքրելով հատիկը և հեռացնելով մոլախոտերի սերմերը, մենք այդպիսով կանխում ենք մշակովի բույսերի սերմերի հետ միասին հողում մոլախոտերի սերմեր ցանելու գործը: Կոլտնտեսությունները պետք է լավ ճիշտն, վոր հասկավոր հացարույսերի սերմացույի մեջ գտնված մեր սովորական մոլախոտերի սերմերի մի տոկոսը հողի մեջ ընկնելով, մի հեկտարին տալիս ե 25—30 հազար մոլախոտերի բույսեր:

Զտելուց հետո սերմացուները պետք է համապատասխանեն պետական սերմային տեսչության կողմից սահմանված պայմանագրություններին, այդ խոկ պատճառով ել սերմացուներից զտելիս հատուկ ուշադրություն պետք է դարձվի սերմագոտիչ մեքենաների (քամհար, տեսակավորող, տրիերներ) ընտրության, ինչպես նաև նրանց համար մաղեր հարմարեցնելու վրա:

Կոլտնտեսության մեջ հատիկը կարելի յե զտված համարել այն ժամանակ, յերբ հատիկի վորակն սառուցող բրիզագը կամ զյուղատնտեսը հատիկը զննելուց հետո արձանագրություն են կազմում և զանում են, վոր նա պիտանի յե ցանքսի համար: Այդ քիչ եւ, փորձելու համար հատիկից նմուշ պետք է վերցնել և այդ նմուշն սւղարկել պետական սերմային տեսչության մոտակա կայանը, լարորատորական ստուգման յենթարկելու նրա աղտօտվածությունը և ծրունակությունը:

Սերմագոտման աշխատանքին մեծ ուշադրությամբ և բարեխազորեն պետք է վերաբերվել, վորովինեան սերմագոտման վատ աշխատանքը դաշտերի աղտօտվածության ուղղակի սպառնալիք և հանդիսանում: Սերմագոտման աշխատանքի համար անհրաժեշտ է ջոկել լավագույն և փորձառու կոլտնտեսականներին, վորոնք աշխատանքում որինակելի յեն յեղեր:

Սերմագոտման ժամանակ ստացված այն մնացորդները, վորոնք վեսասակար խառնուրդներ չեն պարունակում, նրանք իրեն մնասունի կեր կարող են գործածվել միայն ծեծած վիճակով:

Սերմացուն լավ զտելով, արձանագրություն կամ վկայագիր ստանալով չի կարելի գործը վերջացած համարել: Զպետք և մո-

ունալ, վոր հատիկը ուշադիր ինսամք և համապատասխան պայմաններ ե պահանջում, վորպեսզի չփշանա կամ չփերտնի Փչացած հատիկը համաշափ և լավ ծիր չի տալիս, իսկ մոլախոտերն ուժեղ կերպով խեղգելու յեն մշակովի բույսերի թույլ ծիլերը. Դրա համար հարկավոր ե հետևել հատիկի զրությանը, չափել նրա ջերմաստիճանը, և ցուրտ որերին հացահատիկի շտեմարաններն ու պահեստների ողջ մաքրել:

թէ՛ ցանքսից առաջ և թէ՛ ցանքսի ժամանակ սերմացուները աշալութջ հսկողության և պահպանման պետք ե յինթարկվեն:

Սերմացուն պետք է վորագրվի միայն դիմացկուն, մոլախոտերի սերմերից մաքված տարայտի (պարկ, սայլ) վորպեսզի չթափվի կամ չաղողութիւն:

Զաելուց հետո սերմացուն անպայման պետք է նախորդը հականեխել չոր հականեխիչներով, իսկ ցանելուց առաջ ֆորմալինով, վորպեսզի թունեավոր սերմերը (спорը) վոչչանան:

Հականեխումը պետք է կատարել մոլախոտերի գեմ պայքարող ընկերության խիստ հրահանգների համաձայն, հրահանգիչի կամ գյուղատնտեսի ղեկավարությամբ։ Աշխատանքի այս բնագավառը շատ պատասխանառու բնագավառ է, վորովինեաւ սխալ կերպով հականեխելու դեպքում կարելի յե կամ իջեցնել հատիկի ծլունակությունը, կամ չկարողանալ վոչնչացնել թռնավոր սերմերը։

Միայն լավ մաքրված և հականեխված հատիկը, վորի ծլունակությունը ժամանակին, ցանելուց առաջ ստուգված ե, կաահամաչափ գիմացկուն ծիլեր, վորոնք իրենց արագ աճումով կարողանան խեղդել մոլախոսերին և լայ բերք կտան:

ՀՈՒՆ ԳԱՐԱՆԱՅԻՆ ԼԱՎ ՄՃԱԿՈՒՄԸ—ՀԱՂԹԱՆԱԿԻ  
ԼԱՎԱԿՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Ե ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ  
ՄԴՎՈՐ ՊԱՅՖԱՐՈՒՄ

Հողի բարձրորակ մշակումը ազրոնումիական բոլոր կանոնների համաձայն—հանդիսանում է մոլախոտերի գեմ հաջողությամբ պայքարելու հիմնական պայմանը։ Ազրոնումիական կանոններից ամենափոքը չափով նահանջելն իսկույն կավելացնի դաշտերի և գանձսերի աղտոտվածությունը։

Վորովեսզի լավ և ժամանակին կատարվի հողի գարնանային մշակումը, դրա համար հարկավոր է ժամանակին նախապատրաստվել գրան: Գարնանային հողամշակումը լիիվ և կանոնավոր կանցկացվի միայն այն ժամանակ, յերբ նախապատրաս-

տությունը ճիշտ և կատարված, ինչենտարը և լծառաբջը նորոգված են և բանալ անսառնը լավ և խնամված:

Առաջին հոդված շակումը — դա զերավադ ցանքսն և — ցանքսը  
ցեխում»: Մոլախոտերի գեմ պայքարելու գործում այս ցան-  
քսի ունեցած առավելությունների մասին մենք ունենք կող-  
տնտեսությունների հարուստ տվյալներ: Գերավադ ցանքսը հա-  
մաչափ և վաղ ծիլեր և տալիս և սրա չնորդիվ հաջողությամբ  
պայքարում ե մոլախոտերի գեմ, խեղդում նրանց և թույլ շի-  
տալիս նրանց ամբողջովին զարգանալ և սերմակալեր:

Պետք ե հիշել, վոր գերավիսաղ ցանխը կատարվում է միայն  
աշնանավար հողի վրա ցեխում, յերբ դաշտերում դեռ հնա-  
րավորություն չկա մեքենաներով վորեւ ալխատանք կատարելու-  
թեխում ցանված հատիկը, հողի ամենափոքր չափով չորանալու  
դեպքում, իսկույն պետք ե տափանիի:

Խոնավությունը հողի մեջ լավ պահապանելու համար, սովորական ցանքսին հատկացվելիք աշխանավարը, հենց վոր հարաբերություն յեղավ, իսկուն պետք է տափանվի մեկից մինչև յերեք հետքով, աշխատանքներն սկսելուց 2—3 որվա ընթացքում։ Աշխանավար հողը ժամանակին չտափանելը առաջ է բերում հողի խոնավության ավելորդ վատնում, ծանր պայմաններ և ստեղծում մշակովի բույսերի համար և նպաստում ե մոլախոտերի աճմանը։

Յեթե աշնանավար հողամասերում վերաբմատային մոլախտ-  
տեր կան (սեղ, խոզախոտ և այլն), ապա այս հողամասերը  
հարկավոր ե խնամքով մշակել զսպանակավոր կուլտիվատորնե-  
րով և նըանց հետեւից «Աենա» և «Զիդ-զագ» տեսակի ծանր  
տափաններով՝ յերեքից մինչև չորս հետք: Վերաբմատները լավ  
«սանրելու» համար հողամշակումը պետք է կատարել զանա-  
զան ուղղությամբ (խաչաձև), իսկ վերաբմատները կանոնավոր  
կերպով հեռացնելու և մաքրելու համար իսկույն գործի գցեր  
ձիաքարշ փայտիերը:

Այս աշխատանքը կատարվում է նրա համար, վորպեսզի  
մոլախոտերի վերաբարձր հողի յերեսից մաքրվի, սահրդի: Վե-  
րաբարձրային մօլախոտերը չարագույն թշամիներ եր: Գարնա-  
նալին շրջանում նրանց դեմ մղվող պայքարը համառորեն պետք  
է կազմակերպվի, վորովհետև միայն այս ժամանակն է, վոր  
կարելի յե իսկական լավ արդյունքներ ձեռք բերել:

Սանրված վերաբժանելը վոչ մի դեպքում չի կարելի թողնել դաշտերում։ Նրանք խսկույն պետք ե տարվեն միջնորդին սահմանները և այրվեն։

Յեթե վերաբմատային մոլախոսերով վարակված աշնանավարը խիստ կոշտացել է, ապա մշակումը պետք է կատարել չըրային շրջաններում կորպուսավոր գործիքներով, առանց թերթի, վորպիսպի հողից քիչ քանակությամբ խոնավություն շողիանա:

Աշնանավարի մաքուր հողամասերը, չխախտելով ցանքաշրջանառությունը, պետք է հատկացվեն ամենավաղ ցանքսերին, իսկ ավելի աղտոտ հողամասերը — ուշ հասունացող մշակույթներին: Ուշ ցանքսերին հատկացված աշնանավարի վրա մոլախոտերը խիստ արգությամբ են զարգանում: Դրա համար նախ քան ցանքս սկսելը՝ մոլախոտերը վոչչացնելու նպատակով չորային շրջաններում մի անգամ, իսկ խոնակ շրջաններում յերկու անգամ պես ե մեակել հողը կուլտիվատորով, փորի նետելից անմիջապես պես ե տափանել:

Վոչ մի դեպքում չի կարելի սկավառակային գործիքներ աշխատեցնել այն դաշտերում, վորոնք վարակված են վերաբմատային և ցանցառարմատ մոլախոտերով (սեղ, խոզախոտ, տատասկափուշ, փաթթաթուկ և այլն), վորովհետեւ մանր մասնիկների կտրտված վերաբմատը, արմատները և ճյուղերը խոնակ հողում վոչ թե չորանում են, այլ տարածված լինելով ամրող դաշտում, ավելացնում են մոլախոտերը:

Մոլախոտերի դեմ պայմանական գործում աշնանավարը լավագույն միջոց է, մանավանդ յերեն նա զարնանը լավ մշակվի: Պետք է հիշել, վոր յեթե աշնանավարով լավ պայմաններ են ստեղծվում մշակովի բույսերի համար, ապա և այսպիսի պայմաններ ստեղծվում են նաև մոլախոտերի համար: Այդ իսկ պատճառով աշնանավարի մշակման յեղանակները, վորոնց նպատակն և պայքարել աղտոտ բուսականության դեմ, առանձին խնամքով պետք ե անցկացվեն:

Անցյալ տարի կոլտնտեսություններում աշնանավարը շատ քիչ ե արված, այդ իսկ պատճառով ել մշակույթների մեծ մասը պետք կլինի ցանել գարնանավարի հողում:

Բոլորին հայտնի լի, վոր վաս գարնանավարը մոլախոտերի զարգացման անմիջական ոժանդակողն և հանդիսանաւմ: Հետևեաբար անհրաժեշտ ե մորիկիզացիայի յենթարկել բոլոր ուժերը, վորպեսզի գարնանավարը կատարվի ամենակարճ ժամկետերում և բարձր վորակական ցուցանիշներով: Մենք գիտենք, թե ինչ հսկայական վնաս հասցրեց մեզ նոսր վարը, վորովհետեւ նանպատեց դաշտերի աղտոտվելուն: Այս տարի պետք ե վճռականապես վերջ տալ այս չարիքին և գարարեցնել մեր դաշտերում նոսր վարից առաջացող մոլախոտերի զարգացումը:

Առաջին Աղոփ-Սկզբովյան յերկրային կուսկոնֆերանսը ձիչամատնանշեց, վոր վարի խորությունը 14—18 սանտիմետրից պակաս չպետք է լինի: Բացարձակապես վոչ մի կարիք չկանանչելու այս թվանշանից:

Ագրոախնիկայի տեսակետից լավ և իր ժամանակին կատարված վարը՝ նրանից անմիջապես հետո 2—3 հետքով կատարվող տափանման հետ միասին—դա յերաշխիք է այն քանի, վոր մշակովի բույսերի համար այնպիսի լավ պայմաններ կստեղծվեն, վորոնք թույլ են տալիս նրանց պայքարելու մոլախոտերի դեմ և հաղթող դուրս դալ: Գարնանավարին հատկացվելիք հողամասերը պետք ե մաքրվեն մոլախոտերից և շարատունի մշակույթների ֆնացորդներից:

ԽՍՀՄ Կենտգործկոմի նաւարշանը վորուեց զարնանավարը կատարել միայն կորպուսային գորբաներով: Բոլոր կողմնաեսությունները պարաւագոր են կատարելու արս պահանջը, վորպես մոլախոտերի դեմ պայքարելու ամենաեցական միջոցառում: Վարի համար ցանքսարուների գործածությունը նպաստում է մոլախոտերի բազմանալուն:

Մեր յերկրամասի առանձին շրջաններում ալժմ ամենափասակար մոլախոտը հանդիսանում է դոննիկը: Այն դաշտերը, վորոնք վարակված են գոննիկով, ձիշտ այսպես, ինչպես վիետուկով, հնարավորին չափ պետք է տրամադրել շարատունիկ և ուրիշ ավելի ուշ հասունացող մշակույթներին, վորպեսզի կարելի լինի գարնանավարի ժամանակ վոչչացնել այս մոլախոտերը:

Կողմնաեսությունների և խորհնանակառությունների պրակտիկան վազուց ե հաստատել այն փաստը, վոր չտափանաված հողը շուտ և չորանում, զրա համար ել վոչ մի դեպքում չպիտի թույլ տալ վոր վարի և տափանման միջև անջատում առաջնա: «Ինչ վոր այսոր ցերեկը վարեցիր, յերեկոյան պետք ե տափանված լինի»:

Հոգի գարնանավային մշակումը պետք է կոլտնտեսության մասների ուշադրության կենտրոնում լինի, վորովհետեւ նա յե վճռում ամրող բերքի բախտը:

Ահա թե ինչու առաջին Աղոփ-Սկզբովյան կուսկոնֆերանսը ահազին ուշադրություն դարձեց հոգի գարնանավային ձիչամշակման հարցի վրա և ՄՏ. կայանների, խորհնանակառությունների և կողմնաեսությունների բոլոր աշխատողներին ուղղված դիմումի մեջ ասաց:

«Մենք արգեն չենք կարող թույլ տալ վոր վարը շարքաների մեքենաներով, ցորենի գութանով կատարվի, այլ պար-

տավոր ենք, ինչ ել վոր լինի, ապահովել խորունկ վարը դութանով (14—18 Ամ վոչ պակաս): Սա մեկն ե այն զլիավոր պարմաններից, վորոնք ապահովում են մոլախոտերի գեմ հաջող պայքարը և լավ բերքը»:

### ՅԵԹԵ ՎԱՏ ՑԱՆԵՄ, ԱՊԱ ԹՈՒՅԼ ԿՏԱՍ ՄՈԼԱԽՈՏԵՐԻՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԶԱՐԴԱՌԱԼՈՒ

Լավ զարգացած մշակովի բույսը, խիտ լինելու դեպքում, ավելի լավ կարող ե զիմաղը մոլախոտերին և դանդաղեցնել նրանց զարդացումը: Այդ իսկ պատճառով, նախ քան ցանքսին ձեռնարկելը, կոլտնտեսությունը պետք ե վորոշի, թե ինչքան ուժեղ ե վարակված դաշտը և ինչպիսի մոլախոտերով, և ըստ այնմ ել յեղբակացություն հանի, թե սերմացանի ինչ նորմայի վրա պետք ե կանգ առնել: Պետք ե հիշել, վոր սերմացանի նորմայի իջեցումը—դա կուլակային և վեսարարական դրույթ ե, վորի նպատակն ե իջեցնել բերքը և ալիբացնել դաշտերի աղտոտվածությունը:

Կոլտնտեսությունների համար սահմանված սերմացանի նորմաներն անպայման պետք ե պահպանվեն:

Յերկրային առաջին կուսկոնֆերանսը վորոշեց՝ «կրճատել վաղահաս մշակույթների և ուշահասների (յեղիպտացորեն, կորեկ) գարնանային ցանքսի ժամկետները վոչ պակաս, քան մի յերկրորդ մասով, վերջին տարիների համեմատությամբ: Այս անվիճելի ճիշտ պահանջը, վորը գնուական նշանակություն ունի բերքի բարձրացման ասպարիզում—մոլախոտերի գեմ մղվող պայքարում պետք ե կատարիլի կոլտնտեսությունների կողմից, վորպես մարտական առաջարկություն:

Ցանքսի ժամանակ պետք ե հետեւ վոր շարքացանները ճիշտ ցանեն սահմանված նորման և վոչ մի դեպքում թույլ չտալ ցանելու վատ մաքրված հացահատիկ: Շարատունկ մշակույթներ ցանելիս պետք ե պահպանել շարքերի ճշտությունը և շարքամիջի սահմանված լայնությունը, քանի վոր միայն այս պայմաններում կարելի յե գործաղը մեքենաները՝ շարատունկ մշակույթների խնամելիս Սերմերը հողի մեջ պետք ե թաղվեն աղբուկանոնների սահմանված խորությամբ: Յեթե սերմերը համաչափ և ուղիղ թաղվեն, ապա ծիլերը հավասարաչափ և ժամանակին կզարդանան, իսկ այս հանգամանքն իր հերթին հնարավորություն կտա մշակովի բույսերին հաջողությամբ պայքարելու մոլախոտերի գեմ:

### ԱՐԳԵԼԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՅՏԵՐՈՒՄ

Հինուն ե և այսպես. ինամբով մշակվում են դաշտը, ցանում են լավագույն սերմերը, բայց և այնպես վոչ պակաս շափով մոլախոտերը նորից յերեան են զալիս: Սա առաջանում է նրանից, վոր մոլախոտերի սերմերը, վորոնք հաճախ ահագին քանակությամբ գտնվում են դաշտում, ծիլեր են տալիս: Այդ իսկ պատճառով վոչ մի դեպքում չի կարելի մոռանալ այն հանգամանքը, վոր ինչքան ել լավ մշակենք հողը, այնուամենայնիվ մոլախոտերի գեմ քաղնանի միջոցով տարգող հետագա պայքարը պետք ե լինի կարեվորագույն և ահրաժեշտ միջոցներից մեկը:

Մեր Ազգվ-Սևծովյան յերկրամասում շարատունկ և տեխնիկական մշակույթների քաղնանը վազուց ե կիրառվում: Սակայն այդ քիչ ե: Հասկավոր մշակույթները նույնպես պետք ե ձեռքով քաղնանվեն աղատաված ցանքսատարածություններում: Հասկավոր հացաբույսերի ձեռաքաղինանը պետք ե կատարել այն ժամանակ, յերբ նրանք դեռ ցողուն չեն տվել Յերկամյա հասկավոր գոնսիկը կամ պետք ե պոկվի, կամ կտրվի: Այսպիսի յեղանակը, ինչպես նաև ձեռքով արմատից պոկելու յեղանակը, կարելի յե գործադրել նաև մեր շարագույն մոլախոտի—տատասկավիշն նկատմամբ: Վոչ մի դեպքում չի կարելի հասկավոր հացաբույսերի համար քաղնանուրագ (որոկա) գործածել:

Մեր յերկրամասում անցյալ տարի կոլտնտեսությունները առաջինը լայն չափով գործադրեցին հասկավոր մշակույթների քաղնանը: Այդ քաղնանը կատարող բոլոր կողմնականները փորձով համոզվեցին, վոր մոլախոտերից մաքրված հացաբույսերը շատ ավելի լավ բերք տվին: Քաղնանված հացաբույսերը քիչ չափով յենթարկվեց ժանգին, «զարկվածքին», և ամենից զլիավորը, վոչ մի դժվարություն չներկայացրեց գյուղատնտեսական մեքենաներով, մասնավորագես կոմբայններով հնձելուն:

Շարատունկ մշակույթների մաքրումը մոլախոտերից պետք ե կատարել թե շարքամիջերում, և թե շարքերում, կրկնելով այս գործողությունը մոլախոտերի հայտնաբերվելու չափի համեմատ, մինչև այն ժամանակ, յերբ շարքամիջերն ամենուրեք ծածկվում են մշակովի բույսերին: Շարատունկերի քաղնանը ամռանը պետք ե կատարել վոչ պակաս:

քան 2—3 անգամ: Զարագույն թշնամի — տատասկափշի և ուրիշ արմատացանցաւ մոլախոտերի դեմ պայքարելու գործում, շարասունկերի մշակումը պետք է կը կնել այն ժամանակ, յերբ հողի մակերեսին ամեն սննդամ նորից յերեան և գալիս այս մոլախոտի պսակը, վոչ միայն ամառվա առաջին, այլ և յերկրորդ կեսին, Յեթե շարատունկերի հողերում կան քիչ տարածված, այլ առանձին կույտերով տատասկափուշ գեղձատերե, մատիզեղ և աղ բազմամյա մոլախոտեր, այսպիսի տեղերը պետք ե յենթարկվեն հատուկ լրացուցիչ մշակման:

Թե ինչ նշանակություն ունի խնամքը շարատունկ մշակութների բերքի և աղտոտվածությունը պակասեցնելու համար, կարելի յի տեսնել Արմավրի յեզիպատացորեն սոյայի փորձնական կայանի փորձերից:

Աշնանավարում ցանքած յեզիպատացորենը՝ զանազան ձևով ինտամվելու դեպքում, տվել ե հետեւյալ արդյունքները.

Խ ն ա մ բ	Մի ն ե կ տ ա - րի բերքը ցանքներով	Հատիկի բերքը տո- կուներով	Ըստհանուր տա- րածությունից բանի տոկոսն և աղտոտված մո- լախոտերով
2 շարքահերկ և 2 ձեռքի քաղնան	24,3	100	22
2 շարքահերկ և 1 ձեռքի քաղնան	15,3	63	50
1 շարքահերկ և 1 ձեռքի քաղնան	12,3	50	66

Զանազան ինսամքներից առաջացած բերքի այսպիսի արքերությունն ստացվել և նաև յեզիպատացորենը զարնանավարում ցանքելու դեպքում:

1 շարքահերկ և 2 ձեռքի քաղնանը տվել են 100 տոկոս բերք  
2 » » 1 » » » 63 » »  
1 » » 1 » » » 58 » »

Մոլախոտերի դեմ պայքարելու լավ միջոցը հանդիսանում է նրանց վոչնչացումը զարգացման վաղ աստիճանում, վորի համար անհրաժեշտ ե լայն չափով կիրառել շարատունկ մշակույթների (արևածաղկի, յնգիպատացորենի, սորգոյի, շաքարի ձակնդեղի, բամբակեղենի) ծերի զարնանային տափանում:

Հաճախ կարելի յե նկատել, վոր խնամքով մշակելու և քաղնանելուց հետո յել մոլախոտեր են յերեան գալիս: Վարտե-

ղից են յերեան գալիս նրանք: Դժվար չե գուշակել, յեթե նայելու լինենք մեծ քանակությամբ մոլախոտերով ծածկված մեր ճանապարհներին, միջնորդային սահմաններին, չցանված տեղերին: Այստեղ մոլախոտերը հսկայական չափերով անարգել կերպով տարածում են իրենց սերմերը գաշտերի վրա:

Այստեղից պարզ ե, վոր մոլախոտերը սարսափելի չեն միայն այնտեղ, ուր նրանք անմիջապես գտնվում են ցանքսերում: Կոլտնտեսությունների և խորհանտեսությունների համար նույնպես վասակար են և այն մոլախոտերը, վորոնք գտնվում են ցանքսերի շուրջը չցանված տեղերում, սահմաններում, արտատեղերի ճանապարհների վրա և այլն:

Ահա թե ինչու անհրաժեշտ ե վճռական պայքար մղել սահմանամերձերում, չցանված տեղերում և ճանապարհներում յեղած մոլախոտերի դեմ:

Ամառ ժամանակ հարկավոր ե վոչ պակաս, քան 2 անգամ հնձել մոլախոտերը չցանված տարածություններում, վորպեսզի մոլախոտերին թույլ չտրվի սերմակալելու:

Սահմանների, ճանապարհների և ցանքսի շուրջը յեղած այլ տարածությունների խնամքը կդադարեցնի մոլախոտերի մուտքը մեր գաշտերում և կիշտացնի մոլախոտերի դեմ պայքարելու աշխատանքը, վորպիսին պետք ե անցկացնել գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

## ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՐԵԼ ՅԵՎ ԼԱՎ ՄՇԱԿԵԼ ՄԱԳՈՒՐ ՅԵԼԵՐԸ

Մայուր ցելերը — մոլախոտերի դեմ պայքարելու ամենախիլական, ամենահուսատու միջոցներ են: Այս տեսակետից ցելերը հսկայական նշանակություն ունեն նաև յերկրամասի հարավային շրջանների համար:

1934 թվականին կոլտնտեսությունների մեծ մասի ցանքները չեն գրավելու բոլոր տարածությունները, նրանց համար նախազժված ցանքսաշրջանառությունների պատճառով: Մնում են վորոշ քանակությամբ ազատ հողեր:

Այսպիսի ազատ հողը կտոր-կտոր չպետք ե ցրել ցանքսաշրջանառության գաշտերի միջև: Այդ հողը պետք ե վերածել 1—2 գաշտերի, վորոնք ապա հատկացվելու յեն աշխանացաններին այն հաշվով, վոր այս աշխանացանները օժանդակ ժամանակին վարել մարուք ցելեր:

ԽՈՏԱՅԻ

61245-67

ԽՈՏԱՅԻ

ԽՈՏԱՅԻ

ԽՈՏԱՅԻ

Սակայն ցելերը դաշտերը մոլախոտերից մաքրելու գործում իրենց հսկայական ազգեցությունը ցույց կտան միայն այն դեպքում, յերբ նրանք ժամանակին և լավ են մշակված։ Վատ և իր ժամանակին չմշակված ցելը կարող է հակառակ ներգործություն ունենալ և դառնալ մոլախոտերի անկարան։

Ցելերի վարը պետք է կատարվի մի միայն կորպուսային դութաններով, գարնանացան մշակույթները ցանելուց հենց անմիջապես հետո և պետք է ավարտվի համենայն գեղս վոչ ուշ, քան հունիսի 5—10։

Փորձակայանների տվյալներով և կոլտնտեսությունների պլակտիկայով փորոշակի հաստատված ե, վոր ցելն ինչքան շուտ հերկվի, անքան ավելի շատ բերք կտան նրա վրա ցանված աշնանացան մշակույթները։ Ցելը պետք է վարել 16—20 սանտիմետր խորությամբ և վարելուց անմիջապես հետո պետք է տափանել վերարմատային մոլախոտերով (սեղ, խողախոտ) (СВИНОРА) վարակված հողամասերում այնպիսի խորությամբ պետք է վարել վոր այս մոլախոտերի վերարմատների հիմնական գանգվածը հողից պոկիֆ։ Այս գեպքում վարելուց անմիջապես հետո անհրաժեշտ և «սանրել» վերարմատները զսպանակավոր կուլտիվատորներով և այնուհետև զանազան ուղղությամբ պետք է տափանել ծանր ատամնավոր տափաններով։ Զապանակավոր կուլախիվատորների բացակայության գեպքում, վերարմատների սանրելը պետք է կատարվի «լինա» կամ «Զիդ—զադ» տիպի ծանր տափաններով, փորոնք ունեն յերկարաձիգ և դեպի առաջ կուցած ատամներ։ Պետք է տափանել մի քանի հետքով խաչաձև ուղղությունմբ։ Սանրված վերարմատները տափաններով կամ ձիաքարշ փոցխերով հավաքել, չորացնել և ապա այրել։ Ցեթե սեղի պոկիված վերարմատները թողնվեն վարելահոգրում, ապա անձրև գալու ժամանակ նրանք կարող են ծլեր արձակել և արմատակալել։

Ամբողջ ամառվա ընթացքում—վարելու ժամանակից հաշված մինչև աշնանաբույսերի ցանքսը—ցելերը բոլորովին գերծ և մաքուր պետք ե պահել մոլախոտերից։ Դրա համար հարկավոր և ամռանը 2—3 անգամ, մոլախոտերի հայտնաբերման շափին նայած, ցելերը մշակել թևերը հանված բազմախոփանի դութաններով։ Տատանկափշով վարակված հողամասերը ամռանը 4—5 անգամ պետք ե մշակվեն, նայած թե ինչ չափով են յերեան դալիս այս մոլախոտի ծլերը։

Սեղով կամ խողախոտով աղտոտված հողերը չի կարելի մշակել սկավառակային դութաններով կամ տափաններով, քանի

վոր այդ բանը կարող է ավելի և շատացնել այս մոլախոտերը, վարոնք ընդունակ են աճել նույնիսկ իրենց վերաբմատների փոքր կտորներից։

### ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԻՑ

Վերեվում մենք տեսանք, վոր մոլախոտերի դեմ մղվող պայքարը նախ և առաջ պահանջում է ժամանակին կատարել բոլոր գյուղատնեսական աշխատանքները։ Պետք է ժամանակին վարել և տափանել դաշտը, ժամանակին ցանել ժամանակին քաղնանել և ալին, բայց սրանով մեկտեղ՝ ժամանակին կատարված աշխատանքները բարձր վորակ պետք է ունենան։

Առանց սրան չի լինի հաջող պայքար մոլախոտերի դեմ։

Որինակի համար կարելի յերել հետեւյալ տվյալները.

Վնասատուների դեմ պայքարող ընկերության հետազոտությունները ցույց են տվել, վոր հողի վերեկի շերտում (մինչև 10 սանտիմետր) մոլախոտերի սերմերի քանակը 1 հեկտարին յեղել և լավ քաղնանված հացահատիկային մշակույթներից հետո—123 միլիոն, իսկ վատ քաղնանվածներից հետո—143 միլիոն, լավ քաղնանված շարատունկերից հետո—57 միլիոն, վատ քաղնանվածներից հետո—342 միլիոն։ Սակայն բարձր վորակի պահանջն ամենից առաջ և առանձնապես վերաբերում է վարին։ Վարի վորակը ամեն տեսակի մշակումներով հանգերձ, կարեռբագույն նշանակություն ունի մոլախոտերի դեմ պայքարելու համար։

Լավ վարը պետք է արվի լրիվ խորությամբ, վորը պետք է միատեսակ լինի ամբողջ հողամասում, և վարել այնպես, վոր հողաշերտն ամբողջովին շրջվի։ Հողաշերտը վատ շրջելու դեպքում, մոլախոտերի սերմերի մի մասը, փորոնք նորմալ կերպով պետք է հողում խորը թաղվեն, մնալու յե հողի մակերեսի վրա և սկսելու յե շուտ աճել։ Լավ վարը պետք է արվի առանց անվար տեղեր թողնելու, դաշտի ծայրերը և անկյունները լավ պետք է հերկվեն։

Հողը լավագույն կերպով մշակելու նպատակով, դաշտը ժամանակ առ ժամանակ պետք է վարվի ըստ լայնության։

### ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊԵՏԸ Ե ՏԱՆԵԼ ՊԱՅՄԱՐԸ

Մոլախոտերի դեմ կովելու միջոցառումները բարդ չեն, բայց նրանք պետք ե անկացվեն սլանաշափ, սիստեմատիկ և լայն

չափով, Վորպեսզի պայքարը կարողանա հարկավոր և արագ հաջողություն ունենալ, դրու համար նա պետք է լավ կազմակերպված լինի: Կոլտնտեսություններում դա ամենից առաջ կախում ունի կոլտնտեսության հիմնական ողակի — կոլտնտեսային բրիգադի աշխատանքից և կազմակերպվածությունից:

Բրիգադը, բրիգադի յուրաքանչյուր անդամը պետք է ճանաչի իր հողամասերը ցանքսաշրջանառության մեջ, ժանոթ լինի դաշտերի պատմության հետ, իմանա հողի հատկությունը, յուրաքանչյուր վանդակի աղտոտվածության չափը, նախորդող մշակույթները և այլն:

Մոլախոտերի գեմ պայքարելու միջոցառումները մանրամասնորեն պետք են քննարկվեն բրիգադային և համակոլտնտեսային ժողովներում, կոլտնտեսության արտադրական ծրագիրը կազմելիս և պետք են մտցվեն յուրաքանչյուր բրիգադի արտադրական ծրագրի և առաջադրանքի մեջ: Պետք են մոբլիզացիայի յենթարկել և ոգտագործել մոլախոտերի գեմ պայքարելու ասպարիզում կոլտնտեսականների ունեցած հարուստ փորձը: Սրա հետ մեկտեղ, առանձնապես կոլտնտեսային յերիտասարդությունը պետք են ուշադրությամբ և համառությամբ ուսումնամիրի մոլախոտերը և նրանց գեմ պայքարելու միջոցները:

Հակամոլախոտային արշավանքին պետք ներդրավին կոլտնտեսականների ամբողջ մասսան, բոլոր տարիքի կոլտնտեսային բնակչությունը—ծերունիներից սկսած մինչև պիոներները—դպրոցականները: Առանձնապես խոշոր աշխատանք պետք է կատարի կոմյերիամիությունը, վորոն այժմ անց են կացնում մոլախոտերի գեմ կատարփող արշավանքի յերկրորդ ետապը:

Մոլախոտերի դեմ մղվող պայքար—պայքար են ունենույն կուլտուրական կոլտնտեսային կյանքի համար:

Մոլախոտերի գեմ մղվող պայքարը նույնքան անողոք և կատաղի պետք են լինի, վորքան կուլակի գեմ մղվող պայքարը:

Առաջափոր կոլտնտեսությունները Մ.Տ կայանների քաղաքայինների գեկավարությամբ արդեն վոտքի յեն հանել մասսաներին պայքարելու մոլախոտերի գեմ: Կոլտնտեսային մասսաների մորիլիզացիան և աշխատանքները կազմակերպելու ընդունակությունը հանդիսանում են մոլախոտերի գեմ մղվող պայքարի հաջողության յերաշխիքը, բերքատվության բարձրացման և կոլտնտեսականներին գեպի ուներ և կուլտուրական կյանքն առաջնորդելու գործի արագացման գլամականը:



ԳԻՒԾ  
Цена 20 կոպ.

17783

5691

На армянском языке

Д. Ф. Китаев А. П. Попов

ВЕСЕННИЕ РАБОТЫ ПО  
БОРЬБЕ С СОРНЯКАМИ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԴԱՐԱՆ

ՈՂԱԿԱՆ-ԴՐԱ ՄՈՒԿՎԱԿԱՑԱՆ ՓՈՂ. № 53  
ԳՐԱԿԵՆՏՈՒ (ԿԵՐՊՈՒՏՈՒ)